ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 25 2022 № 2

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
АРХЕОЛОГИЯ
ARCHAEOLOGY

ՀՏԴ՝ 904
DOI: 10.52971/18294316-2022.25.2-91

«ԿՈՒՄԱՅՐԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ինգա Ավագյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Գյումրու քաղաքապետարանի «Կումայրի» պատմամշակութային
արգելոց-թանգարան

Բանալի բառեր՝ *Շիրակավան, պատահական գտածո, բրոնզե թաս, հարթ, բրոնզե, թիթեղյա, կախիկներ:*

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանը ստեղծվել է 1980թ. և իր ստեղծման օրվանից ծավալել է գիտահավաքչական գործունեություն՝ թանգարանի հավաքածուն մշտապես հարստացնելով հնագիտական նոր գտածոներով: Հավաքածուի մեջ առանձնահատուկ են 1980-ական թթ. վերջին և 1990-ականների սկզբին Շիրակավան գյուղում պատահականորեն գտնված մի քանի բրոնզե գտածոները: Որևէ տեղեկություն իրերի հայտնաբերման մասին չի պահպանվել: Նույնիսկ իրերի դամբարանային ծագումը փաստագրող որևէ տեղեկություն գոյություն չունի: Սույն հաղորդման մեջ ներկայացված են այդ պատահական գտածոները՝ բրոնզե թաս և բրոնզե չորս կախիկներ, կատարվել է նրանց համեմատական ուսումնասիրություն և դասակարգում ըստ տիպերի:

Նախաբան. Այսօր «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի հնագիտական հավաքածուի մեջ ուրույն տեղ են զբաղեցնում Շիրակավանից պատահականորեն հայտնաբերված մի քանի գտածոներ, որոնք 2021թ. դրությամբ դեռ գրանցված չեն եղել թանգարանի մայր մատյանում և այս պահի դրությամբ ստացել են նախնական ֆոնդային համարներ: Ցավոք, որևէ տեղեկություն իրերի հայտնաբերման մասին չի պահպանվել: Կարելի է միայն ենթադրել, որ դրանք դամբարանային համատեքստից

են: Գիտական շրջանառության մեջ են դրվում մի շարք նյութեր (ՆՖ. թիվ 100/1,2,3,4,5)[1], որոնց հրապարակումը համալրում է Շիրակավանի պեղումներից և Հայաստանի այլ շրջաններից հայտնի նմանօրինակ իրերի հավաքածուները:

Գտածոները մետաղյա զետեղարանի նմուշներ են՝ բրոնզե թաս (լուս. 3, 4) և բրոնզե չորս հարթ թիթեղյա կախիկներ (լուս. 5, 11, 12,13):

Բրոնզե թասի բազմաքանակ նմանօրինակները հայտնի են Շիրակի Արթիկ[2], Սպանդարյան հուշարձաններից, Արարատյան դաշտի համաժամանակյա հուշարձաններից: Թասի տրամագիծը 18 սմ է, բարձրությունը՝ 8 սմ: Այն ամբողջական բրոնզե թիթեղից է և թվագրվում է Ք.ա. XII-X դդ.: Թասի հատակին՝ արտաքին կողմից, առկա է 5 մմ տրամագծով մի փոսիկ, որը թասի մեջ երևում է պորտ հիշեցնող ելուստ՝ 1 սմ տրամագծով: Հավանաբար այս ելուստը պայմանավորված է պատրաստման եղանակով: Բրոնզե, ամբողջական թիթեղից Սպանդարյանի նմանօրինակ թասի տրամագիծը 17 սմ է (լուս. 2, 14)[3], խորությունը՝ մոտավորապես 5 սմ: Սպանդարյանի թասի նմանօրինակը պեղվել է Արթիկի դամբարանադաշտի ուշ բրոնզի երկրորդ փուլով թվագրվող թիվ 575 դամբարանում (լուս. 1)[4]: Տ. Խաչատրյանը նմանօրինակ թասերը նույնպես թվագրում է վաղ երկաթի և միջին երկաթի դարերով, սակայն նշում է, որ կան նաև ավելի վաղ օրինակներ Թրիալեթիից, որոնք Բ.Կուֆտինը թվագրում է ուշ բրոնզի դարաշրջանով: Ինչպես Սպանդարյանի, այնպես էլ Շիրակավանի թասերը ամբողջական թիթեղից են, սակայն Շիրակավանի նմուշը տարբերվում է նրանով, որ մյուսները կենտրոնում չունեն 1 սմ տրամագծով ելուստ:

Համեմատաբար լավորակ բրոնզից ուրարտական թասեր պահպանվում են Հայաստանի պատմության թանգարանում և Էրմիտաժում: Դրանք պեղվել են Կարմիր բլուրից և ունեն ուրարտական արքաների անուններով արձանագրություններ[5]՝ Մենուա, Արգիշտի I, Սարդուրի II, Ռուսա I: Բ. Պիոտրովսկին ենթադրում է, որ Կարմիր բլուրից պեղված հայտնի թասերը պատրաստված են հատուկ սարքով, որը ճզմել է թիթեղը, կամ արհեստավորը, այն կռել է ամբողջական բրոնզե թիթեղից:

Նկատի ունենալով, որ թասի հայտնաբերման պայմանները և միջավայրը անորոշ են և հենվելով Շիրակից հայտնի երկու նմանօրինակների վրա, Շիրակավանից պատահական հայտնաբերված թասը կարելի է թվագրել Ք.ա. XII-X դդ.՝ Լճաշեն-Մեծամորյան մշակութի III փուլով[6]:

Շիրակավանից հայտնի պատահական գտածոների մեջ առանձնահատուկ ուշադրության են արժանի բրոնզե սկավառակն ու երեք կախիկների բեկորները (штандарт), որոնք դրոշներից կախելու նպատակով են օգտագործվել: Բրոնզե թիթեղից պարզունակ շրջանների դասավորություն է հիշեցնում թիթեղյա սկավառակը (լուս. 5), որի

---

[1] Նյութերը ժամանակին թանգարանի մայր մատյանում չեն գրանցվել և հոդվածում ներկայացվում են նախնական ֆոնդավորման համարներով:

[2] **Хачатрян Т. -1975,** с. 220.

[3] **Ավագյան Ի. -2016,** էջեր 14-17: **Ավագյան Ի. -2016,** էջեր 258-263:

[4] **Хачатрян Т. -1975,** с.с. 219-220, рис. 131; **Badalyan R., Avetisyan P. -** 2007, p. 74, pl VI-16.

[5] **Пиотровский Б. -1959**. с. 180, табл. XXXIV.

[6] **Badalyan R., Smith A. -2008**, p 47.

մի ծայրին ոլորված թիթեղից կախելու հարմարանք է արված, իսկ կենտրոնում հարթ տապարիկ հիշեցնող ելուստ կա: Այս կախիկները իրենցից ներկայացնում են տիեզերքի պարզունակ մոդելներ: Բազմաթիվ նմանօրինակները պահպանվում են Հայաստանի պատմության թանգարանում: Այս նմուշները, ըստ Բ. Թումանյանի և Հ. Մնացականյանի, պատկերում են սնամեջ Երկիրը՝ շրջապատված երկու օղակով (ջրով և մթնոլորտով)[7]: Բոլոր դեպքերում երկիրն ունի կլոր ձև: Այդ ժամանակներում ենթադրել են երկրի կլորությունը, իսկ Երկրի կենտրոնական մասում պատրաստված՝ ներքևում լայն, իսկ վերևում խաչաձև ցցվածքը շատ բանով հիշեցնում է աստղագիտական գրականության մեջ ընդունված Երկրի նշանը[8]: Տապարիկ հիշեցնող այս մանրամասնը մասնագետները նաև անվանում են ցուլ[9], եզան կամ ցուլի գլուխ[10] և տապարացուլ[11]: Ըստ Հ. Մարտիրոսյանի՝ արևի պաշտամունքի հետ կապվող սկավառակաձև առարկաներ են, համակենտրոն շրջանակների թիթեղյա հսկա մեդալիոններ[12]: Այս օրինակները երբեմն թռչունների փոքրիկ ֆիգուրներ են կրում, կենտրոնական մասում ցլի գլխի ոճավորված կերպարով կամ այլ առարկաներով[13]: Այս գտածոներից ամենահետաքրքրականը համակենտրոն սկավառակի հիմքի վրա բարձրացող յոթ «աստղերի» ֆիգուրներ կրող առարկա է, որ կարծես հիմք է տալիս մտածելու, թե մեր հեռավոր նախնիները կոնկրետ գաղափար ունեին յոթ մոլորակների մասին:

Շիրակում՝ Ալեքսանդրապոլի բերդի Սև ամրոցի մոտակայքում, երկնային լուսատուների նման համախումբ ունեցող վեց շտանդարտներ է պեղել Է. Ռեսլերը 1900 թ.[14] (լուս. 15, 16): Սև ամրոցի մոտակայքում նրա պեղած չորս սալարկղային դամբարաններից երեքի հանգուցյալները արական սեռի ներկայացուցիչներ էին, զույգ շտանդարտներ (երկարությունը՝ 35 սմ, թիթեղային հատվածինը՝ 19,5 սմ, սրածայր պոչուկի երկարությունը՝ 15,5 սմ, լայնությունը՝ 13 սմ, թիթեղի հաստությունը՝ 2 մմ) խաչաձև հատված գտնվել են հանգուցյալների կրծքավանդակի վրա (լուս. 15), սակայն կանացի դամբարանում նման իրեր չեն եղել: Իրերի թիթեղային մասը պոչուկին գամված է եղել երկու գամերով: Նմանօրինակները՝ Շիրակավանի դամբարանադաշտից[15]:

Ըստ Հ. Մարտիրոսյանի՝ աշխարհահռչակ աստղագետներից շատերը, Հայաստանը համարելով Հին Արևելքի աստղագիտության, տոմարական առաջին հաշվումների ելակետային կենտրոն, այս առարկաներից յուրաքանչյուրը վերագրել են առանձին երևույթների պաշտամունքին[16]: Բ. Թումանյանը, Հ. Մնացականյանը, Հ. Սիմոնյանը Լճաշենից հայտնաբերված այս գտածոն թվագրում են Ք.ա. XI-IX դդ. և համարում են

---

[7] **Թումանյան Բ, Մնացականյան Հ. –1965,** էջ 10:
[8] Նույնը:
[9] **Մարտիրոսյան Հ. -1971,** էջ 100:
[10] **Իսրայելյան Հ. -1973,** էջ 84:
[11] **Աբրահամյան.Լ .-2004**, էջեր 12-14:
[12] **Մարտիրոսյան Հ. -1969,** էջ 32, տախտակ 37:
[13] Նույնը:
[14] **Rösler E. -1902**. pp. 221-245.
[15] **Թորոսյան Ռ. և այլք -2002**, էջ 106:
[16] **Մարտիրոսյան Հ. -1969,** էջ 32, աղ. LXXV-17:

Արեգակնային համակարգության մոդել[17], Հ. Իսրայելյանը կախիկը կապում է ցուլի համաստեղության և լուսատուների պաշտամունքի հետ[18]:

Նմանօրինակ կախիկները և Ռեսլերի պեղած շտանդարտների նմանօրինակները մեծ քանակությամբ պեղվել են Շիրակավանի դամբարանադաշտում[19], այս իրերը հնագետները համարում են ծիսական իրեր: Ներկայացնենք երեքական համակենտրոն շրջաններից կազմված բրոնզաձույլ կախիկները: Վերջիններիս կենտրոնական մասում հարթ տապարակի ձև ունեցող զարդ կա: Ճիշտ նման մեր պահոցներում պահպանվող օրինակին, որի տրամագիծը 11,5 սմ է, իսկ կախելու համար նախատեսված ոլորված թիթեղ հիշեցնող ծայրից մինչև սկավառակի վերջին համակենտրոն շրջանը ընկած տարածությունը՝ 13 սմ (լուս. 5): Շիրակավանի դամբարանադաշտի կախիկները բաժանվում են երկու տարբերակի: Առաջին տարբերակին պատկանող նմուշները ձևավորում են փակ շրջան[20], իսկ մյուսների ծայրերը ստորին մասում փոքր-ինչ հեռացած են[21]: Շիրակավանից հայտնի փակ շրջան ձևավորող նմուշը պեղվել է 1978թ. թիվ 31 քարարկղային դամբարանում: Պեղումների պահին պահպանված էր դամբարանի հարավարևմտյան անկյունաձև հատվածը, խորությունը՝ 1,1 մ: Հայտնաբերված նյութերն են խոշոր եղջերավոր անասունների առանձին ոսկորներ, ատամնավոր մակերեսներով երկու ապարանջան (մեկը ներճկված էր), անկյուններում՝ առյուծների գլուխներով զարդարված ուղղանկյունաձև իր, եռաշրջան կախիկներ, նետասլաքներ, գավազանի գլխակալ, վահան, կոճակ, օղ, շքասեղի մաս, խեցեղեն՝ ամբողջական և բեկորային վիճակում[22]: Շիրակավանից հայտնի բաց շրջան ձևավորող նմուշը դարձյալ պեղվել է 1978թ. թիվ 29 քարարկղային դամբարանում (2,6Х1,2Х1,4մ): Քարարկղի հատակին սալ էր դրված, որի հետևանքով հատակը 10 սմ ցածր էր գտնվում արևմտյան կեսից: Դամբարանի կենտրոնում գտնվեց կրծքավանդակը, իսկ ստորին ծնոտը հարավային պատի մոտ էր դրված: Կոնքոսկրը և ոտքերի ոսկորները հայտնաբերվեցին արևելյան մասում, հատակից 50-60 սմ բարձրության վրա: Այստեղ ակնհայտ էր դիամասնատման ծեսը: Ուղեկցող նյութերն էին խեցեղեն, վահանի, օղ, եռաշրջան կախիկներ, աստղաձև զարդեր և բրոնզե կեռ[23]: Մեր նմուշը պատկանում է երկրորդ խմբին և հավանաբար դամբարանային մշակույթից է և, ինչպես վերը նկարագրված նմանօրինակները, երկրի խորհրդանիշն է համարվում: Այս կախիկի հետ են աղերսվում նաև Օշականի թիվ 99 դամբարանից պեղված երեք բրոնզե կախիկները, որոնք հնագետները Տոլորսի[24] (լուս. 10) և Վարդաքարի կախիկների նմանությամբ թվագրում են XI-X դդ.[25]:

---

[17] **Թումանյան Բ, Մնացականյան Հ. –1965,** էջ 12: **Սիմոնյան Հ. -2013,** էջ 42:
[18] **Իսրայելյան Հ. -1973,** էջեր 86-87:
[19] **Թորոսյան Ռ. և այլք -2002**, էջ 106:
[20] Նույն տեղում, աղ. LXXI, 2:
[21] Նույն տեղում, աղ. LXVI, 10-12, LXVII, 10, LXIX 20-21, LXX, 8, LXXII, 7, LXIII, 16, LXXV, 15:
[22] Նույն տեղում, էջ 100:
[23] Նույն տեղում, էջ 100:
[24] **Մարտիրոսյան Հ. -1971,** էջ 100:
[25] **Есаян С., Калантарян А. -1988.** g93-94, 97-98, таб. CIV-1,4,7. **Badalyan R., Smith A. -2008,** p. 47.

Կախիկների այս տեսակը հայտնի է Ք.ա. I հազարամյակի սկզբից (Տոլորս, Վարդաքար), իսկ Մինգեչաուրի II և V դամբարանաթմբերից գտնվածները թվագրվում են Ք.ա. IX-VIII դդ.: Հավանաբար նման կախիկ են ձուլել և Այրիվանքի բնակավայրի պեղումներից հայտնաբերված, թերի պահպանված կաղապարի մեջ, որը գտնվել է Ք.ա. I հազարամյակի սկզբով թվագրվող նյութերի միջավայրում[26]:

Շիրակավանից հայտնի այլ բրոնզե թիթեղյա գտածոները, որոնք պահպանվում են «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի պահոցում, իրենց տեսքով տարբերվում են վերը նկարագրված օրինակներից, սակայն որոշ առանձնահատկություններով նաև աղերսվում են դրանց: Սրանցից երկուսը նույնպես ունեն կախելու համար ոլորված թիթեղից հարմարանք: Համեմատաբար ամբողջական կախիկն ունի 14 սմ երկարություն և տապարի լայնացող մասում՝ 6 սմ լայնություն (լուս.13): Փոքր-ինչ վնասված են տապարի եզրը և հիմքին մոտ գտնվող ծայրերը (5,5 սմ): Երկրորդ կախիկի միայն վերին հատվածն է պահպանված (պահպանված երկարությունը՝ 10 սմ), բացակայում է տապար հիշեցնող ստորին մասը (լուս.11), իսկ հիմքին մոտ գտնվող եզրերի պահպանված հատվածը 5,5 սմ է, պահպանվել է նաև ոլորված թիթեղից կախելու հարմարանքը: Երրորդ կախիկը պահպանվել է գրեթե ամբողջությամբ (լուս.12), բացակայում է վերին հատվածը, որին հավանաբար ամրացված է եղել ոլորված թիթեղից կախելու հարմարանքը (երկարությունը 11,5 սմ է, իսկ տապարիկի լայն հատվածը՝ 6,5 սմ): Բրոնզե թիթեղից պատրաստված երեք կախիկներն էլ ձևով հիշեցնում են հարթ տապարներ, բայց թե ինչի սիմվոլներ են համարվում, միանշանակ դժվար է ասել: Այս կախիկների նմանօրինակները հայտնի են Թալինից[27] և Շիրակավանից[28]: Թալինի նմուշը (18,5 սմ) գտնվել է թիվ 8 դամբարանից (լուս. 10), այն առաջին անգամ հրատարակել է Գ.Արեշյանը 1990թ.: Թալինի կախիկը դամբարանից է, ի տարբերություն Շիրակավանից հայտնի մյուս նմանօրինակի (լուս. 8), որը, ինչպես մեր գտածոները, նույնպես պատահական է և չափերով մոտ է մեր կախիկներին:

Հաշվի առնելով տապարաձև կախիկների հայտնի նմանօրինակների թվագրությունը՝ «Կումայրի» արգելոցի նմուշները թվագրվում են Ք.ա. X-VIII դդ. և պատկանում են Լճաշեն-Մեծամորյան մշակույթի IV-V փուլերին:

Ամփոփում. Այսպիսով Շիրակավանից հայտնաբերված պատահական գտածոները բնորոշ են դամբարանային մշակույթին, իրենց նմանօրինակներն ունեն Հայաստանի հնագիտական մի շարք հուշարձաններից հայտնի նյութերում և թվագրվում են Ք.ա. XII-VIII դդ.: Բրոնզե թասը թվագրվում է Ք.ա. XII-X դդ. և բնորոշ է Լճաշեն-Մեծամորյան մշակույթի III փուլին, իսկ չորս բրոնզե կախիկները՝ Ք.ա. X-VIII դդ. և պատկանում են Լճաշեն-Մեծամորյան մշակույթի IV-V փուլերին:

[26] Ըստ աղբյուրի՝ նյութը 2002 թ. դրությամբ հրատարակված չէ (նշվ. աշխ., էջ 106):
[27] **Badalyan R., Avetisyan P.- 2007**. p. 251, pl VII-10.
[28] **Թորոսյան Ռ. և այլք -2002**, աղ. LX-14:



1. Թաս Արթիկից



2. Թաս Սպանդարյանից

3. Թաս՝ Շիրակավան պատահական գտածո

4.Թաս՝Շիրակավան պատահական գտածո, պորտաձև ելուստը

5.Կախիկ՝ պատահական գտածո Շիրակավանից



6.Կախիկ Շիրակավանից

7. Կախիկներ Շիրակավանից



8.Տապարաձև կախիկ Շիրակավանից

9. Կախիկ Տոլորսից

10 Կախիկ Թալինից

11.Պատահական գտածո Շիրակավանից

12. Պատահական գտածո Շիրակավանից

13. Պատահական գտածո Շիրակավանից

16. Շտանդարտ Սև ամրոցից

14 Թաս Սպանդարյանից

15.Շտանդարտներ Սև ամրոցից

О СЛУЧАЙНЫХ НАХОДКАХ ИЗ ШИРАКАВАНА ПО МАТЕРИАЛАМ ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО МУЗЕЯ-ЗАПОВЕДНИКА "КУМАЙРИ"

Авагян И. Э.

Ключевые слова: *Ширакаван, случайная находка, бронзовая чаша, гладкие, бронзовые, листовые подвески.*

В работе представлены случайные находки из села Ширакаван Ширакского марза, которые хранятся в археологическом фонде Историко-культурного музея-заповедника ՚Кумайри՚. Случайные находки были обнаружены во время строительных работ, которые проводились в селе Ширакаван в конце 1980-х – начале 1990-х гг. Коллекция состоит из бронзовых изделий - бронзовая чаша и бронзовые штандарты-подвески двух типов. Бронзовые штандарты датируются началом I-ого тысячелетия- IX-VIII вв. до Р. Х., а бронзовая чаша - XII-X вв. до Р. Х.

ABOUT RANDOM FINDS FROM SHIRAKAVAN STORED IN THE HISTORICAL AND CULTURAL MUSEUM-PRESERVE "KUMAYRI"

Avagyan I. E.

Key words: *Shirakavan, chance find, bronze bowl, smooth, bronze, leaf pendants.*

The work presents random findings from the village of Shirakavan, Shirak Marz. Chance findings were discovered during the construction work that was carried out in the village of

Shirakavan in the late 1980s - early 1990s. The collection consists of bronze items - a bronze bowl and two types of bronze standards-pendants. Bronze standards date back to the beginning of the 1st millennium-9th-8th centuries BC, and a bronze bowl -XII-X centuries BC.

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Աբրահամյան Լ. -2004**, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 12-14 էջեր,:
2. **Ավագյան Ի. -2016,** Պատահական գտածոներ Շիրակի Սպանդարյան գյուղի դամբարանադաշտից, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 9-րդ միջազգային գիտաժողով, Գյումրի, 24-25 սեպտեմբերի, զեկուցումների դրույթներ, Երևան, 14-17 էջեր:
3. **Ավագյան Ի. -2016,** Պատահական գտածոներ Շիրակի Սպանդարյան գյուղի դամբարանադաշտից, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. XIX, Գյումրի, 258-263 էջեր:
4. **Թումանյան Բ, Մնացականյան Հ. -1965**, Բրոնզե դարի գոտի օրացույց, Երևան:
5. **Թորոսյան և այլք -2002,** Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., Հին Շիրակավան (1977-1981թթ. պեղումների արդյունքները), Երևան:
6. **Իսրայելյան Հ. -1973,** Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզիդարյան Հայաստանում ըստ հնագիտական նյութերի, Երևան:
7. **Մարտիրոսյան Հ. -1969,** Ուշբրոնզիդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Հայսաստանի հնագիտական հուշարձաններ, բրոնզիդարյան հուշարձաններ 2, պրակ II, Երևան:
8. **Մարտիրոսյան Հ. -1971,** Քարի դարից՝ Ուրարտու, Երևան:
9. **Սիմոնյան Հ. -2013,** Հայաստանը ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում (Ք.ա. 1500-800), Հայաստանի հնագիտական ժառանգությունը, Պատմամշակութային ժառանգության մատենաշար, հ. է, Երևան, 42-49 էջեր:
10. **Есаян С., Калантарян А. -1988,** Ошакан-I, Основные результаты раскопок 1971-1983, Ереван.
11. **Пиотровский Б . -1959.** Ванское царство (Урарту). М..
12. **Хачатрян Т. -1975.** Древняя культура Ширака III-I тыс. до н.э. Ереван.
13. **Badalyan R., Smith A., Lindsay I., Khatchadourian L., Avetisyan P. -2008,** With appendiced by Monahan B. and Hovsepyan R., Archäologische Mitteilungen aus Iran unt Turan (AMIT), Separatum, Band 40, 2008, pp. 47 -105.
14. **Badalyan R., Avetisyan P. -2007**. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I, Mt. Aragats and its surounding region, Maison de l ̓Orient et de la Maditerranée-Jean Pouilloux, BA International Series.
15. **Rösler E. -1902.** sendet aus Elisabethpol den Schluss (vgl. Verhandlungen, 34, S. 137) seines Berichtes über archäologische Forschungen und Ausgrabungen in Transkaukasien, unternommen für die kaiserlich russische Archäologische Commission im Jahre 1900, pg. 221-245:

Ընդունվել է՝ 10.03.2022
Գրախոսվել է՝ 25.04.2022
Հանձնվել է տպ.՝ 28.11.2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Ինգա ԱՎԱԳՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,
«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն,
էլ. հասցե՝ inga.avagyan.76@mail.ru